Ալեքսանդր Ծատուրյան

Ժամանակակից օրորանք

Օ՛ր-օ՛ր-օ՛ր, բալա՛ս, օ՛ր-օ՛ր-օ՛ր, ջանի՛կ,
Կուզեմ քեզ կյանքում տեսնել երջանի՛կ:

Հերրդ հարուստ էր, հարուստ էլ մեռավ,
Ո՞ւմ փողերն ասես կյանքում չրկերավ.
Ժրլատ ու գրծուծ, մարդ չէր մեղքանում,
Խիղճը փողումն էր, հոգին-գրպասում.
Գրպանից զոռով կոպեկ հանելիս,
Հետն էլ հոգուցն էր մի կտոր տալիս…
Ողորմի՛ հոգուն… էդ ճանապարհով
Քեզ էլ գանձ թողեց ու կյանք ապահով.

Օր-օր-օ՛ր, բալաս, օր-օր-օ՛ր, ջանի՛կ,
Կուզեմ քեզ կյանքում տեսնել երջանի՛կ…
Կրվարձեմ դայակ ու դաստիարակ՝
Մամզել ու մյուսիո, որ ազա՛տ, արա՛գ
Միտքրդ զարգացնեն, աչքրդ բաց անեն,
Կյանքի նորանո՛ր ճամփեքով տանեն…
Փորձ, շիկ ու ճաշակ շատ ունեն նրանք,
Անմեղ գառի պես, դու կյանք չես մտնիլ.
Կյանքի համ ու հոտ, գաղտնիքներ բոլոր
Նրրանք լա՛վ գիտեն… Որդի ջան, օ՛ր-օ՛ր…

Օր-օր-օ՛ր, բալա՛ս, օր-օր-օ՛ր, ջանի՛կ,
Կուզեմ քեզ կյանքում տեսնել երջանի՛կ:

Քեզ ուսում կըտամ, բարձրագույն ուսում,
Մեր դարը, որդի՛ս, դիպլոմ է ուզում.
Դիպլոմը ծոցիդ՝ հինգ տասը տարից
Հայրենիք կըգաս օտար աշխարհից,
Կոկված ու փոխված, քեզ չե՛ն ճանաչի,
Կասեն սա իսկի հայի նըմա՞ն չի…
Տա՛ աստված, որդի՛ս, նըման չըլինես,
Հայի անունը կե՞ղտ կըբերի քեզ…
Օր-օր-օ՛ր, բալա՛ս, օր-օր-օ՛ր, ջանի՛կ,
Կուզեմ քեզ կյանքում տեսնել երջանի՞կ:

Կյանքը թատրոն է… Ամեն մարդ պիտի
Նախշած երեսով բեմ դուրս գա, որդի՛.
Սաղ կյանքըդ խաղա՛, եղի՛ր դերասան
Մի օր Ժան-Պիեռ, մի օր թուրք Հասան…
Նեղի՛ր անզորին, պատվի՛ր ուժեղին,
Միշտ դերեր փոխիր ժամի՞ն ու տեղի՞ն…
Թե կին էլ ուզես՝ ծուռ քիթ ու բերան,
Ամո՞թ չի, միայն մե՞ծ օժիտ վերան…
Օր-օր-օ՛ր, բալա՛ս, օ՛ր-օ՛ր-օ՛ր, ջանի՛կ,
Կուզեմ քեզ կյանքում տեսնել երջանի՛կ…